Կարգապահական գործ թիվ ԿԳ-16128

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 143-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/95-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խորշուդյանի, Հարություն Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սարգիս Ասլանյանին (արտոնագիր թիվ 801) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 18.07.2016թ. տեղեկանքի համաձայն փաստաբան Սարգիս Ասլանյան ունի 55.000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015 թ. օգոստոսից 2016 թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 283-Ա/ԿԳ-16128 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սարգիս Ասլանյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 01.08.2016թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 03-ին, ժամը՝ 19:06-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Փաստաբան Սարգիս Ասլանյանը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Սարգիս Ասլանյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 14.10.2008թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Սարգիս Ասլանյան ունի 55.000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. օգոստոսից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 18.07.2016թ. տեղեկանքով),

3) փաստաբան Սարգիս Ասլանյանը իր անդամավճարի պարտքը չի մարել, իսկ 03.10.2016թ. դրությամբ այն կազմում է 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.10.2016թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Սարգիս Ասլանյանի (արտոնագիր 801, ստացված՝ 14.10.2008թ.) նկատմամբ 2009-2016 թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ հարուցվել է 5 անգամ՝ բոլորը անդամավճար չվճարելու հիմքով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սարգիս Ասլանյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների

վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7- րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Սարգիս Ասլանյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. և 03.10.2016թ. տրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ Սարգիս Ասլանյանը շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ վերը նշված խախտումն դեռևս առկա էր: Միաժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Սարգիս Ասլանյանը բազմիցս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու համար, սակայն այն ևս չի նպաստել նրան, որ Սարգիս Ասլանյանը փոխի իր վարքագիծը և չխախտի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սարգիս Ասլանյանին (արտոնագիր թիվ 801) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սարգիս Ասլանյանին (արտոնագիր թիվ 801) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սարգիս Ասլանյանին (արտոնագիր թիվ 801):

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան